ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀԾԿՀ-26/9-ՄԱԾՁԲ

ք.Երևան «_____» _____ 2026 թ.

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Սաֆարյանի, որը գործում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի և այլ օրենքների հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Մանվել Ջալավյան Ա/Ձ-ն, ի դեմս տնօրեն Մանվել Ջալավյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում **է գրասենյակային հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

Digitally signed by SAFARYAN ARTUR 2401750053
Date: 2026.02.17 16:48:00 AMT

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 (երկու) օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **500000 (հինգ հարյուր հազար)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում

նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[22] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 **Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:**

Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում միչև պայմանագիր կնքվելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումն իրականացվում է պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով	«Մանվել Ջալավյան» ԱՁ
ք. Երևան, Մյասնիկյան 5/1	Գործ. հասցե ք. Երևան Մոսկովյան 25 3/1 ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ինեկո բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011183010	Հ/Հ 2050032155921001
ՀՎՀՀ 02531594	ՀՎՀՀ 82934656
Գլխավոր քարտուղար՝ Ա. Սաֆարյան	Տնօրեն՝ Մ. Ջալավյան
	Digitally signed by JALAVYAN MANVEL 3102850170 Date: 2026.02.17 15:38:29 AMT
----------	----------
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« » 2026թ. կնքված
ՀԾԿՀ-26/9-ՄԱԾՁԲ ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը 2026թ
1	50311100/1	Գրասենյակային հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ /համաձայն կից ներկայացված ցուցակի/: Սարքավորման տեղափոխումը վերանորոգման և ետ վերադարձը իրականացնում է սպասարկողը:	դրամ	500000	1	ք. Երևան, Մյասնիկյան 5/1	ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 18-րդ ենթակետով սահմանված լիազորված մարմնի կողմից գործարքի հաշվառման օրվանից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 20-ը՝ ըստ պատվիրատուի պահանջի

ՑՈՒՑԱԿ

	Ծառայության անվանումը	Գինը
	Xerox WC 3045 բազմաֆունկցիոնալ սարքի	
1.	Դիագնոստիկա	1405
2.	Պրոֆիլակտիկա	2669
3.	Մեխանիկայի նորոգում	2529
4.	Վառարանի նորոգում	3400
5.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	4721
6.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	5479
7.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	3625
8.	Սկաների փոխարինում ներառյալ սկաները	5058
9.	Թմբուկի փոխարինում ներառյալ թմբուկը	7362
10.	Մայրական տպասալի փոխարինում	11099
11.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	6041
12.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	3934
	HP LJ 6p մոդելի լազերային տպիչի	
13.	Դիագնոստիկա	1405
14.	Պրոֆիլակտիկա	1967
15.	Մեխանիկայի նորոգում	2248
16.	Վառարանի նորոգում	2950
17.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	3569
18.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	5339
19.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	2838
20.	Մայրական տպասալի փոխարինում	5648
21.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	3878

22.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	3231
	HP LJ 1320 մոդելի լազերային տպիչի	
23.	Դիագնոստիկա	1545
24.	Պրոֆիլակտիկա	4777
25.	Մեխանիկայի նորոգում	5058
26.	Վառարանի նորոգում	5339
27.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	5367
28.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	6688
29.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	3259
30.	Մայրական տպասալի փոխարինում նորով	12785
31.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	8711
32.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	3512
	HP LJ 2200 մոդելի լազերային տպիչի	
33.	Դիագնոստիկա	1264
34.	Պրոֆիլակտիկա	4777
35.	Մեխանիկայի նորոգում	5058
36.	Վառարանի նորոգում	5058
37.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	5676
38.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	7474
39.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	2697
40.	Մայրական տպասալի փոխարինում նորով	10790
41.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	6631
42.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	3934
	HP LJ 2015 մոդելի լազերային տպիչի	
43.	Դիագնոստիկա	1489
44.	Պրոֆիլակտիկա	4636
45.	Մեխանիկայի նորոգում	5676
46.	Վառարանի նորոգում	4777
47.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	5114
48.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	6772
49.	Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	2866
50.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	3934

	HP LJ 2055D մոդելի լազերային տպիչի	
51.	Դիագնոստիկա	1545
52.	Պրոֆիլակտիկա	4496
53.	Մեխանիկայի նորոգում	4777
54.	Վառարանի նորոգում	4496
55.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	6575
56.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	7783
57.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	3569
58.	Մայրական տպասալի փոխարինում նորով	17702
59.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	10116
60.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	4074
	HP LJ 3005n մոդելի լազերային տպիչի	
61.	Դիագնոստիկա	1545
62.	Պրոֆիլակտիկա	4496
63.	Մեխանիկայի նորոգում	5058
64.	Վառարանի նորոգում	4215
65.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	6744
66.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	8430
67.	Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	3316
68.	Մայրական տպասալի փոխարինում նորով	17421
69.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	9329
70.	Ցանցային քարտի փոխարինում նորով	4833
71.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	4636
	HP Color LJ 2550 մոդելի լազերային տպիչի	
72.	Դիագնոստիկա	3653
73.	Պրոֆիլակտիկա	7306
74.	Մեխանիկայի նորոգում	4496
75.	Վառարանի նորոգում	5901
76.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	9554
77.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	11071
78.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	4074
79.	Մայրական տպասալի փոխարինում նորով	10116
80.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	8092
81.	Լազերի փոխարինում նորով	8795
	Canon A3 IX6800 մոդելի գունավոր տպիչի	
82.	Դիագնոստիկա	3372
83.	Պրոֆիլակտիկա	6463
84.	Մեխանիկայի նորոգում	9554
85.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	4721
86.	Տպող գլխիկի փոխարինում նորով	47614
87.	Մայրական տպասալի փոխարինում նորով	26301
	Canon i-SENSYS LBP7018C գունավոր լազերային տպիչի	
88.	Դիագնոստիկա	3653
89.	Պրոֆիլակտիկա	9554
90.	Մեխանիկայի նորոգում	7868
91.	Վառարանի նորոգում	11802
92.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	8331
93.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	15005
94.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	6884
95.	Մայրական տպասալի փոխարինում նորով	21243

96.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	16129
97.	Լազերի փոխարինում նորով	9835
	LexMark MX410de բազմաֆունկցիոնալ սարքի	
98.	Դիագնոստիկա	2950
99.	Պրոֆիլակտիկա	4777
100.	Մեխանիկայի նորոգում	3793
101.	Վառարանի նորոգում	5873
102.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	6575
103.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	7193
104.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	4580
105.	Սկաների փոխարինում ներառյալ սկաները	8711
106.	Մայրական տպասալի փոխարինում նորով	13150
107.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	7053
108.	ADF-ի փոխարինում նորով	11240
109.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	9216
	HP M1536dnf MFP բազմաֆունկցիոնալ սարքի	
110.	Դիագնոստիկա	2697
111.	Պրոֆիլակտիկա	4777
112.	Մեխանիկայի նորոգում	5676
113.	Վառարանի նորոգում	6575
114.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	7474
115.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	8598
116.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	3456
117.	Սկաների փոխարինում ներառյալ սկաները	5198
118.	Մայրական տպասալի փոխարինում նորով	16606
119.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	9273
120.	ADF-ի փոխարինում նորով	18405
121.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	4664
	Kyocera Mita KM 4050 պատճենահանող սարքի	
122.	Դիագնոստիկա	2978
123.	Պրոֆիլակտիկա	14330
124.	Մեխանիկայի նորոգում	7193
125.	Վառարանի նորոգում	9554
126.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	19107
127.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	28661
128.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	5816
129.	Մայրական տպասալի փոխարինում նորով	23322
130.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	20203
131.	Տոներ-քարթրիջի լիցքավորում	13768
132.	Ամբողջական թմբուկի փոխարինում նորով (Kyocera Mita KM 4050 drum unit)	126445
	Kyocera KM-2030 պատճենահանող սարքի	
133.	Դիագնոստիկա	2388
134.	Պրոֆիլակտիկա	4496
135.	Մեխանիկայի նորոգում	5479
136.	Վառարանի նորոգում	8430
137.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	15651
138.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	17548
139.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	7531
140.	Տոներ-քարթրիջի լիցքավորում	9273

141.	Ամբողջական թմբուկի փոխարինում նորով (Kyocera Mita KM 2030 drum unit)	92024
	Canon iR 2016j պատճենահանող սարքի	
142.	Դիագնոստիկա	4777
143.	Պրոֆիլակտիկա	9554
144.	Մեխանիկայի նորոգում	5676
145.	Վառարանի նորոգում	7474
146.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	11296
147.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	15061
148.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	6266
149.	Տոներ-քարթրիջի լիցքավորում	7531
150.	Ամբողջական թմբուկի փոխարինում նորով (Canon iR2016 drum unit)	66117
	Canon image FORMULA DR-4010C սարքի	
151.	Դիագնոստիկա	2529
152.	Պրոֆիլակտիկա	3653
153.	Մեխանիկայի նորոգում	5620
154.	Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	11296
155.	Վերանորոգում վնասված պահեստամասերի փոխարինում	8711
	Canon image FORMULA DR-C225II	
156.	Դիագնոստիկա	2810
157.	Պրոֆիլակտիկա	4496
158.	Մեխանիկայի նորոգում	6182
159.	Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	13909
160.	Վերանորոգում վնասված պահեստամասերի փոխարինում	9554
	Panasonic FAX սարքի	
161.	Դիագնոստիկա	1264
162.	Պրոֆիլակտիկա	1826
163.	Մեխանիկայի նորոգում	2388
164.	Սնուցման բլոկի նորոգում	2107
	Epson GT 2500 սկաներ	
165.	Դիագնոստիկա	3934
166.	Պրոֆիլակտիկա	6041
167.	Վերանորոգում վնսված պահեստամասերի փոխարինում	11970
	HP G2710 սկաներ	
168.	Դիագնոստիկա	2107
169.	Պրոֆիլակտիկա	3878
170.	Վերանորոգում վնսված պահեստամասերի փոխարինում	5620
	HP LJ 1200 մոդելի լազերային տպիչի	
171.	Դիագնոստիկա	1264
172.	Պրոֆիլակտիկա	2697
173.	Մեխանիկայի նորոգում	2669
174.	Վառարանի նորոգում	2810
175.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	4777
176.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	6182
177.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	3091
178.	Մայրական տպասալի փոխարինում նորով	5507
179.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	6519
180.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	3793
	HP LJ Pro MFP M227sdn բազմաֆունկցիոնալ սարքի	
181.	Դիագնոստիկա	3091
182.	Պրոֆիլակտիկա	5901
183.	Մեխանիկայի նորոգում	5620
184.	Վառարանի նորոգում	7868

185.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	6238
186.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	8317
187.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	3456
188.	Սկաների փոխարինում ներառյալ սկաները	17871
189.	Մայրական տպասալի փոխարինում նորով	22704
190.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	11240
191.	ADF-ի փոխարինում նորով	17787
192.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	5957
	Canon MF 237W բազմաֆունկցիոնալ սարքի	
193.	Դիագնոստիկա	4777
194.	Պրոֆիլակտիկա	6744
195.	Մեխանիկայի նորոգում	5620
196.	Վառարանի նորոգում	8149
197.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	6575
198.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	5845
199.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	5901
200.	Սկաների փոխարինում ներառյալ սկաները	17197
201.	Մայրական տպասալի փոխարինում նորով	19107
202.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	9329
203.	ADF-ի փոխարինում նորով	23884
204.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	4383
	HP LJ PRO M15A լազերային տպիչի	
205.	Դիագնոստիկա	1798
206.	Պրոֆիլակտիկա	4777
207.	Մեխանիկայի նորոգում	5254
208.	Վառարանի նորոգում	5114
209.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	6688
210.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	7643
211.	Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	3344
212.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	3878
	Canon MF 453dw բազմաֆունկցիոնալ սարքի	
213.	Դիագնոստիկա	3372
214.	Պրոֆիլակտիկա	6322
215.	Մեխանիկայի նորոգում	7868
216.	Վառարանի նորոգում	12645
217.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	12251
218.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	17927
219.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	7615
220.	Սկաների փոխարինում ներառյալ սկաները	18292
221.	Մայրական տպասալի փոխարինում նորով	22030
222.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	14668
223.	ADF-ի փոխարինում նորով	22423
224.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր,	6322

	մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	
	Canon MF 463dw բազմաֆունկցիոնալ սարքի	
225.	Դիագնոստիկա	3372
226.	Պրոֆիլակտիկա	6463
227.	Մեխանիկայի նորոգում	8149
228.	Վառարանի նորոգում	11521
229.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	12251
230.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	17927
231.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	7615
232.	Սկաների փոխարինում ներառյալ սկաները	18826
233.	Մայրական տպասալի փոխարինում նորով	22760
234.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	14668
235.	ADF-ի փոխարինում նորով	22592
236.	Քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	6322
	Canon MF 657Cdw բազմաֆունկցիոնալ սարքի	
237.	Դիագնոստիկա	3934
238.	Պրոֆիլակտիկա	9554
239.	Մեխանիկայի նորոգում	11240
240.	Վառարանի նորոգում	9273
241.	Վառարանի թերմոժապավենի փոխարինում նորով	13768
242.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով	16101
243.	Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում նորով	5592
244.	Սկաների փոխարինում ներառյալ սկաները	14049
245.	Մայրական տպասալի փոխարինում նորով	51983
246.	Սնուցման բլոկի փոխարինում նորով	21749
247.	ADF-ի փոխարինում նորով	42570

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողով
ք. Երևան, Մյասնիկյան 5/1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011183010
ՀՎՀՀ 02531594
Գլխավոր քարտուղար՝ Ա. Սաֆարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Մանվել Ջալավյան» ԱՁ
Գործ. հասցե ք. Երևան Մոսկովյան 25 3/1 տ
«Ինեկո բանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050032155921001
ՀՎՀՀ 82934656
Տնօրեն՝ Մ. Ջալավյան

Digitally signed by JALAVYAN MANVEL
3102850170
Date: 2026.02.17 15:39:11 AMT

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« » 2026թ. կնքված
ՀԾԿՀ-26/9-ՄԱԾՁԲ ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50311100/1	Գրասենյակային հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	0	100000	100000	250000	250000	250000	395000	395000	395000	500000	500000	500000	500000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողով
Ք. Երևան, Մյասնիկյան 5/1
ՀՀ 900011183010
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02531594
Գլխավոր քարտուղար Ա.Սաֆարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Մանվել Ջալավյան» ԱՁ
Գործ. հասցե ք. Երևան Մոսկովյան 25 3/1 տ
«Ինեկո բանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050032155921001
ՀՎՀՀ 82934656
Տնօրեն՝ Մ. Ջալավյան

Digitally signed by JALAVYAN MANVEL 3102850170
Date: 2026.02.17 15:39:33 AMT

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« » 2026թ. կնքված
ՀԾԿՀ-26/9-ՄԱԾՁԲ ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
« » 2026թ. կնքված
ՀԾԿՀ-26/9-ՄԱԾՁԲ ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն